

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում մագիստրոսի կրթական ծրագրով ուսուցումը մեկնարկել է 2011թ-ից: Նույն տարում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրա առկա ուսուցմամբ ընդունվել են ոստիկանության 7 ծառայող: 2013թ. մագիստրատուրան տվել է իր առաջին շրջանավարտները: 2012թ. կիրառվել է մագիստրատուրայի նաև հեռակա ուսուցումը՝ վճարովի և անվճար հիմունքներով (ընդամենը 32 սովորող):

2013թ. ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կրթահամալիրի ակադեմիայի կազմում ստեղծվել է մագիստրատուրայի բաժանմունքը:

Բաժանմունքի գործունեության հիմնական ուղղություններ են՝ իրավագիտություն մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստումը, ուսուցման որակի ընդունված չափանիշների և կրթական գործընթացի թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը, կրթական չափորոշիչներին և առաջադրված խնդիրներին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացումը, սովորողների ինքնուրույն գիտական, ստեղծագործական և անհատական կարողությունների զարգացմանը նպաստող պայմանների ստեղծումը, կազմակերպվող կոնֆերանսներին, Կլոր սեղան-քննարկումներին, իրավագիտության տարբեր բնագավառներին վերաբերող մրցույթներին սովորողների մասնակցությունը ապահովելուն ուղղված աշխատանքների օժանդակումը:

Մագիստրատուրայի բաժանմունքը կազմակերպում է ուսուցում «Իրավագիտություն» կրթական ծրագրով: Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատաժամվալը համապատասխանում է 120 կրեդիտի: